

Օձ մ'եր ծուարած ու կը նընջեր հանդարտիկ:  
 Քերթողն ինքզինք պահ մ'անհունին մէջ հոգւոյն  
 Ըզզաց Աստուած: Սոթտեց թելերը ջղուտ,  
 Ոսկեղէն մուրճը ակին մէջ, տըժգոյն, վեհ,  
 Մարմարին դէմ, գըլխեբաց,  
 Հըսկայի պէս կանգնեցաւ...  
 Նըշմարեցին աչքերը ձեռք մ'այն աստեւ  
 Մութին ծոցէն՝ կարկառուն՝  
 Որ վիթխարի բըռնած սափոր մը՝ պարպեց  
 Խորն իր հոգւոյն լայնալիճ  
 Տիեզերքին ըստեղծահիւթն հողաբոյր:

Եւ քանդակեց, քանդակեց,  
 Եւ քանդակեց, քանդակեց:  
 Արուեստանոցին բիւզանդական գըմբեթէն  
 Յոյսի ձեթով լի սուրբ գանկ մը կախուած  
 Կ'ըլլար ջահն իր լուսատու:  
 Ան կը տեսներ մարմարին շուրջը ձեւուած  
 Հըզօր երազն՝ որ միս կ'առնուր եւ ծալքեր:  
 Մըտածումն իր՝ այդ քարին կոյս ծոցին մէջ՝  
 Իր արմատներն յուշիկ յուշիկ կը խըրեր  
 Ծառի մը պէս ձիթենի:

Եւ քանդակեց, քանդակեց,  
 Եւ քանդակեց, քանդակեց...  
 Ամէն մէկ բուռն հարուածին տակ յաղթ մուրճին՝  
 Ինչպէս թէ ռումբ մը պայթող՝  
 Ուղիս մը կայծեր, քարերու հետ խուռնախիտ,  
 Կ'անձրեւէին պատերն ի վար խաւարչուտ  
 Պսակի պէս քայքայուող: